ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2011թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների:

1-ին եռամսյակում հրավիրվել է ավագանու հինգ նիստ, Առաջին նիստով փոփոխություն է կատարվել 2011թ բյուջեում:
Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 230 հազար դրամ:
Զիջվել է համայնքի թվով երեք անապահով բնակիչների ավտոմեքենայի գույքահարկը:
01.03.2011թ. կատարվել է շաբաթօրյակ, որի ժամանակ մաքրվել է համայնքի կենտրոնական և գյուղամիջյան ճանապարհները, կուլտուրայի տան և հարակից այգու տարածքը:
Խմելու ջրի ջրագիծը բավականին հին է, որի պատճառով անխուսափելի են ջրագծի վթարները: Բավականին աշխատանք է տարվել որպեսզի ամռանը ինչքան հնարավոր է քիչ լինեն նմանատիպ վթարներ:
Բնակչությանը խմելու ջուր է մատակարարվում օրվա ընթացքում 7ժամյա գրաֆիկով:
2-րդ նիստով գումար է տրամադրվել համայնքի 8 անապահով ընտանիքներին տրամադրվել է 240 հազար դրամ:

Հողի հարկի արտոնությունների վերաբերյալ համայնքում կատարվել է աշխաանքներ , որի

արդյունքում մեծ թվով հողատերեր օգտվել են այդ արտոնություններից:
Ծրագրվել է կառուցել ևս 2 հակակարկտային նոր կայաններ:
Քանի որ ձմեռը շատ տաք էր և տեղումները անձրևի տեսքով են, գյուղամիջյան ճանապարհների մեծ մասը անանցանելի են, այս վիճակը մեղմացնելու համար հարթվել և/ՏԿ/մեքենա ավազ է լցվել այդ ճանապարհների վրա
համայնքում իրականացվել է շաբաթօրյակ:
Գարնանային գյուղատնտեսական աշխատանքները սկսվելու հետ կապված համայնքի բնակչության հետ կազմակերպվել են հանդիպումներ՝ անցկցվել են խորհրդվատվական ժողովներ , որի ընթացքում գյուղատնտեսությամբ զբաղվողներին տեղյակ է պահվել նոր թունաքիմիկատների և կրծողների դեմ պայքարի մասին:
Ավագանու 3-րդ նիստով <<Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ նեգործության ծառայության >> ՊՈԱԿ-ին անհատույթ օգտագործման իրավունքով հողատարածք է տրամադրվել/ հակակարկտային կայանների համար/
Մերուժան Մխիթարյանին պատկանող գյուղ. Նշանակության հողը փոխադրվել է ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի՝ անասնագոմ և թռչնանոց կառուցելու համար:
Համայնքում կազմակերպվել է շախմատի բաց առաջնություն , որի ընթացքում հաղթողներին է տրամադրվել մրցանկներ ՝ 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերի համար:

2011թ

1-ին կիսամյակի հողի հարկի և գույքահարկի հավաքագրումը

1-ին կիսամյակ	հողի հարկ	745 000 դրամ
	գույքահարկ	566 000 դրամ
	հողի վարձավճար	274 800 դրամ
	տեղական տուրք	0

Համայնքի ղեկավար Ռ. Ստեփանյան